ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

5-րդ դասարան

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.

1.Վերնագիրը ընտրում է աշակերտը. առաջարկում ենք հուշող տարբերակներ՝ ***Ծաղիկի ծննդյան օրը, Անսպասելի հայտնություն, Ծաղիկի նվերը, Չիկարելին և հեղինակը փրկում են աղբյուրը, Խիզախ հերոսը*** և այլն:

2.Իրականացրել է մարդկանց երազանքները:

3.Գույնզգույն, խայտաբղետ, ուրախ, բարի, սրտաբաց, երջանիկ, խենթացնող, անուշահոտ և այլն:

4. «Ամենավատ բանը վախկոտ լինելն է: Մարդը նրանով է մեծ, որ հաղթել գիտե…»:

5. Ակունք - ջրի սկիզբ առնելու տեղը

6. ա) բարության և մարդասիրության

7. «Սիրելի՜, քնքուշ ծաղիկ, դու աշխարհի ամենաբարի և ամենագեղեցիկ ծաղիկն ես» կամ՝ շքեղ ծաղիկ, հրաշք ծաղիկ, բարի ծաղիկ, խոնարհ ծաղիկ և այլն:

8. Որովհետև «Թեղենիս սարի կատարից սևակնած մի ամպ դանդաղ սահեց դեպի ծաղիկը, և բոլոր հյուրերը, սև ամպը տեսնելուն պես, թաքնվեցին թփերի տակ»:

9. Ամպը սևակնած էր, անձրևաբեր, բարի. նրան սպասում էին բոլոր ծաղիկներն ու խոտերը:

10.Ուրախ- զվարթ, խնդուն, բերկրաձայն
Երջանիկ- բախտավոր, երանավետ
Անձրևաբեր- անձրևածին, անձրևահոս
Նեկտար - մեղրահյութ
Ցավալի - վշտալի, հիվանդագին

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

5-րդ դասարան

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

1……Որովհետև չարամիտ էր և նախանձ:

2…..Նրան դուր չեկավ աղվեսի նենգությունը:

3. Առյուծը հասկացել էր, որ Աղվեսը չարախոսում է. խոստացել էր՝
Ինչ վնաս որ քեզ ցանկանա, Երկու վնաս նա կստանա:
Այդպես պատժեց չարախոսին՝ կատարելով իր խոստումը:

4. Առակը մեզ սովորեցնում է չչարախոսել, չամբաստանել, չարությամբ չնայել ուրիշի հաջողությանը, լինել համերաշխ ու հանդուրժող, այլապես կարժանանանք չար Աղվեսի ճակատագրին՝ ստանալով մեր արժանի պատիժը:

5. Չար – չարակամ, նախանձ, հոռի, անպիտան, անբարյացակամ

նենգ – խաբեբա, ստոր
ցեղակից – արյունակից, ազգական, բարեկամ
արքա – թագավոր, կայսր, ցար, ինքնակալ
ճեմել –զբոսնել, հանդարտ քայլել

6. «Խելոք» բառը օգտագործվել է **խելացի, արդար, ճիշտ** իմաստներով:

7. Ես հույնպես կվարվեի արդարադատ Առյուծի նման, թույլ չէի տա չարախոսել ընկերոջս մասին և կհորդորեի չարախոսին՝ լինել ազնիվ, արդար, ուղղամիտ, իսկ ընկերոջս կխնդրեի լինել հնարավորինս ներողամիտ և հանդուրժող: Դրանով չարախոսը գուցե պատժվեր:

8. Իմ կարծիքով Առյուծը չափազանց արդարադատ գտնվեց. ես էլ նույնկերպ կվարվեի: Բոլոր չարախոսները պետք է արժանի պատիժ ստանան:

9. Գրվել են մեծատառով, որովհետև առակն ունի այլաբանական իմաստ, և կենդանիների կերպարում հեղինակը նկատի է ունեցել իրական մարդկանց, որոնք, ցավոք, ապրում են մեր կողքին:

10. **«Ով ընկերոջն իր վատ բան ցանկանա**

Մեկի տեղ երկու վնաս կստանա»: